Մերի Դալլաքյան

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԻԿՆԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ԵՔՊԹ-Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Բանալի բառեր- ավանդական տիկնիկ, ժամանակակից տիկնիկ, թանգարան

Տիկնիկը դարեր շարունակ ուղեկցել է երեխաներին և մեծահասակներին առօրյայում և տոնական-ծիսական կյանքում: Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո նախկին հավատալիքներին առնչվող տիկնիկների մի մասն աստիճանաբար մոռացության է տրվել՝ պահպանվելով հիմնականում ժողովրդական տոների և ծեսերի արարողակարգերում: Հիշենք, օրինակ, օջախի պահապան, չարից պահպանող կամ՝ Անձրևաբերության, Մեծ պասի և Համբարձման ծիսակարգերի պարտադիր բաղադրիչ տիկնիկներին: Հետագայում Խորհրդային գաղափարախոսության ազդեցությամբ հայկական ծիսական տիկնիկներից մի քանիսն աստիճանաբար վերածվեցին մանկական խաղալիքի կամ ժողովրդական վարպետների պատրաստած հուշանվերների:

Այսօր էլ և՛ առօրյայում, և՛ որպես ազգային մշակույթի տարր կարևորվում է տիկնիկի տեղն ու դերը մեր հասարակության մեջ:

Մեր զեկուցման նպատակն է քննության առնել տիկնիկ երևույթը՝ Երևան քաղաքի պատմության թանգարանում 2014 թ. նոյեմբերի 11-ին բացված «Տիկնիկային պատմություններ» խորագրով ցուցահանդեսի օրինակով: Ցուցահանդեսի նպատակն էր տիկնիկային պատմությունների միջոցով տիկնիկը ներկայացնել որպես բազմաժանր, բազմաբնույթ մշակութային երևույթ, որը «ներխուժել» է կյանքի գրեթե բոլոր ոլորտները:

Զեկույցը գրելիս օգտվել ենք մասնագիտական գրականության մեջ ավանդական մշակույթում կիրառվող ծիսական տիկնիկներին վերաբերվող նյութերից և տեղեկություններից: Հատկապես օգտակար են եղել Ազգագրական հանդեսներում[1] ավանդական տոների և ծեսերի նկարագրությունները…: Ժամանակակից տիկնիկներին առնչվող նյութերը գրանցել ենք ինչպես թանգարանային ցուցադրության մեջ ներկայացված տեղեկատվական նյութերից, այնպես էլ անձնական դիտարկումներից: Ժամանակակից հուշանվերային մշակույթում տիկնիկների կիրառության և փոխակերպումների խնդիրները շարադրելու համար դաշտային ուսումնասիրություններ ենք կատարել Վերնիսաժում, ինչպես նաև օգտվել ենք Հ. Մելքումյանի հոդվածներից[2]:

Այս թեման դեռևս համալիր ուսումնասիրված չէ մշակութաբանական տեսանկյունից, թեև որոշակի տեղեկություններ պահպանվել են ազգագրագետների ուսումնասիրություններում և դաշտային նյութերում:

Ցուցահանդեսում ներկայացված էին հայկական ծիսական տիկնիկներ, գեղարվեստական արժեք ունեցող ձեռակերտ, հեղինակային տիկնիկներ թանգարանի և անձնական հավաքածուներից, դերասան-տիկնիկներ, ինչպես նաև խորհրդային տարիների զանգվածային արտադրության տիկնիկներ: «Տիկնիկային պատմությունները» սկսվում էին ծիսական տիկնիկներից և ավարտվում թատրոնում «աշխատող» տիկնիկների պատմություններով: Իհարկե, չէին անտեսվել նաև ժամանակակից Բարբիները:

Ավանդական մշակույթում տիկնիկների պատրաստման եղանակները տարբեր էին. իբրև կմախք ծառայում էին փայտե գդալներն ու շերեփները, ավելը կամ ցախավելը, ծառի ճյուղերից կամ սովորական փայտից պատրաստված խաչաձև հիմքը, բրդի կամ տարբեր թելերի ու լաթերի կտորտանքներով լցոնված կտորները, եգիպտացորենի փայտացած մասը, կավե կուժերն ու պուլիկները և այլն: Օրինակ, Համբարձման կամ Վիճակի տոնի (նշվում է Զատիկից ուղիղ 40 օր հետո) ծիսական տիկնիկ պատրաստելու

[1] Լալայան Ե., Նոր Բայազետի գավառ, ԱՀ, գիրք 17, հ.1, Թիֆլիս, 1908:

[2] Մելքումյան Հ., Երևանյան Վերնիսաժը որպես մշակութային տարածք. «Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ», հ. 3, Ե., 2007, էջ 238-243:

համար աղջիկները վիճակի փարչի պարունակությունը լցնում էին բարակավիզ սափորի մեջ, սափորի կոկորդով գրտնակ էին անցկացնում, եզրերը կտորներով ամրացնում, գրտնակի վերևի ցցված մասում կտորներից գլուխ, ձեռքեր ու հագուստ հագցնելով՝ տիկնիկ պատրաստում, որը զարդարում էին իրենց սեփական զարդերով, ուլունքներով: Այդ տիկնիկը հայտնի էր «Վիճակի տիկնիկ», «Արուս», «Վիճակի Արուս» անուններով: Ծիսական տիկնիկների և նրանց գործառույթների մասին բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել թե՛ մասնագիտական գրականության մեջ, թե՛ տարեց բանասացների հիշողություններում:

Բարեկենդանը հայ ժողովրդի հնագույն տոներից մեկն է, ուրախության և զվարճության տոն, որը դարերի ընթացքում պահպանվել և հասել է մինչև մեր օրերը: Բարեկենդան-Աբեղաթող ազգային տոնի անբաժան մասն էին կազմում ժողովրդական ներկայացումները: Բարեկենդանի վերջին օրերին խելահեղության էին հասնում խնջույքները, պարերը, խաղերը: Տղաները հարապարակ էին դուրս գալիս գլխավոր ձիարշավի, որը պիտի ավարտվեր «Ուտիս տատին» վռնդելու, «Պաս պապին» հրավիրելու ծեսերով: «Ուտիս տատը» զզզվված տիկնիկ էր, որ Բարեկենդանի վերջին օրը, երեկոյան, հանդիսավոր գլորվում էր սարի գլխից բարեկենդանյան վերջին խնջույքը հովանավորելուց հետո: Ցուցահանդեսում այս շարքից ներկայացվել էին Մեծ պասի ծիսական տիկնիկներից Ուտիս տատը, Ակլատիզը, Անձրևաբերության ծեսի բաղադրիչ Նուրին, Համբարձման ծեսի Վիճակի Արուսը: Մեծ պասի Ակլատիզը կամ Պաս պապը[1], որ ծերունու կերպարով տիկնիկ է, ավանդական կյանքում ներկայանում էր իբրև Պասի պահապան-հովանավոր, որի պատժից վախենում էին պասը խախտողները, և որպես յոթ շաբաթները հաշվելու միջոց՝ օրացույց: Ի տարբերություն իր արական զույգ Ակլատիզի՝ Ուտիս տատի տիկնիկը բնորոշում էր առատություն և բարեկեցություն:

Ակլատիզը պատրաստում էր տան ամենատարեց կինը բոլորից թաքուն: Տիկնիկն իրենից ներկայացնում էր մի սոխ (կարտոֆիլ, խմորագունդ)՝ վրան յոթ փետուր խրած: Դրանք խորհրդանշում էին պասի յոթ շաբաթները: Որոշ վայրերում փետուրները կարող էին գույնզգույն լինել կամ չորսը սպիտակ, մեկը սև ու սպիտակ, երկուսը սև, քանի որ պասի առաջին 4 շաբաթները ճմռան շրջանում են, վերջին երեքը՝ գարնան, երբ գետինն արդեն սևացել է: Շաբաթը լրանալուն պես մի փետուրը հանում էին: Սոխի վրա խրում էին միոտանի տիկնիկին՝պատրաստված փայտից, բեղ-մորուքով, հագին՝տղամարդու շորեր, աջ ու ձախ պարզած թևերից քարեր կախած: Ամբողջ ընթացքում նա հսկում էր, որ ընտանիքում ոչ ոք չխախտեր պասը: Հակառակ դեպքում պատիժը չէր ուշան. նա քարերով կհարվածեր պասը խախտողին կամ էլ կծու բիբարով կվառեր նրա բերանը: Պասի վերջին օրը՝ վերջին փետուրը հանելուց հետո, երիտասարդները Ակլատիզին տանում էին կալերը և չարախնդալով, դագանակով հարվածելով՝ ջուրն էին գցում, իսկ Ակլատիզի սոխը կամ սոխի ծիլերը տանտիրուհիները պահում էին և գցում ճաշի մեջ: Որոշ վայրերում սոխը թաթախում էին մածունի մեջ և նետում տանիքը: Ըստ ժողովրդական պատկերացումների՝ Ակլատիզը թռչուն է դառնում, թռչում գնում է՝ մյուս տարի կրկին վերադառնալու համար: Այս պատկերացման համաձայն՝ սոխի մի կողմից թռչունի կտուց էին դնում:

Ակլատիզին ժողովուրդը օժտել էր բավականին տարաբնույթ հատկանիշներով: Առաջինը պասը չպահողներին պատժելու գործառույթն էր՝ բերանը վառելու, քարեր նետելու, հատկապես երեխաների մեջ ահ ու սարսափ տարածելու միջոցով: Չնայած սրան՝ Ակլատիզն ավելի դրական, քան բացասական կերպար էր: ժողովուրդը նրան սիրում էր: Դա են վկայում ծիսական այս տիկնիկին առնչվող երգերի մեծ մասը:

Ակլատիզը նաև հուսաբեր էր: Նա կարող էր երջանկություն բերել, ուրախ տարի ապահովել, դուրս վռնդել չարիքը և ապահովել բարին: Փետուրները երբեմն պահում էին ներքնակի տակ մինչև հաջորդ Մեծ պասը: Հավատում էին, որ դրանք կապահովեն բարեկեցություն: Ակլատիզին էին դիմում նաև անհատական խնդրանքներով. «Սուրբ

[1] Մեծ պասի ծիսական տիկնիկը՝Ակլատիզը կամ Պաս պապը, արական տիրապետության և պաս օրերի շրջանը: Նա հայտվում էր պասի առավոտյան՝իր հետ բերելով ծիսական գործողությունների մի ամբողջ շարան, որոնք դարձյալ պիտի ապահովեին պտղաբերությունն ու արգասաբերությունը:

Ակլատիզ, կատարիր խնդրանքս, ես քեզ մատաղ կանեմ»: Նրա վերջին փետուրով ալաշկերտցիները գուշակություն էին անում[1]:

Ցուցահանդեսում ծիսական տիկնիկներին հաջորդում էին Խորհրդային միության զանգվածային արտադրության տիկնիկները:

Ինչպես հայտնի է, առաջին Բարբին շուկայում հայտնվել է 1959 թվականին Նյու-Յորքում: Տիկնիկը մշակել է էլիոթ Հանդլերը սղագրուհիների «Mattel» ընկերությունում: Ենթադրվում է, որ էրոտիկ դերասանուհի Բիլդ Լիլին է եղել հայտնի տիկնիկի նախատիպը, որի լուսանկարը հրատարակվել է «Bild Zeitung» (Գերմանիա) թերթում[2]: Այն սև ու սպիտակ գծավոր լողազգեստով էր, շեկ մազերով ու սև աչքերով: Բարբի ստեղծողները հաճախ մեղադրում են մարդկանց, որ այն վերածել են գեղագիտական ստանդարտի և տիկնիկին նմանվելու համար տարբեր միջոցների են դիմում (դիետա, պլաստիկ վիրահատություն[3])՝ մոռանալով, որ դա անբնական գեղեցկություն է: Կարելի է ասել, որ խաղալիքից բացի, այն ունի նաև այլ կիրառություն: Այս տիկնիկները նաև ճաշակ են թելադրում, դեմքի հարդարման ու հագուստի ոճ և այլն: Խնդիրն այն աստիճանի է հասել, որ 2012 թվականին Իրանում արգելեցին բարբիների վաճառքը, որովհետև այն բացասաբար էր ազդում մահմեդականների աշխարհայացքի վրա:

Մեր ուսումնասիրություններից կարող ենք փաստել, որ ծիսական տիկնիկները ևս հայաստանյան բիզնեսում նորովի դրսևորումներ են ստացել անկախության տարիներին, որոնք հատկապես դրսևորվում են վերնիսաժյան հուշանվերների շարքում: Տիկնիկագործ Ալինա Դավթյանը տիկնիկագործությունը սովորել է մորից ու տատից: Ալինան պատմում է, որ մոտ 5 տարի առաջ հետաքրքրություն չկար տիկնիկների նկատմամբ, բայց հիմա մեծացել է պահանջարկը և այսօր մայրերն իրենց երեխաներին նախընտրում են ավանդական տիկնիկներ նվիրել:

Այսօր Երևանում կա ազգային ձեռագործ տիկնիկների մասնագիտացված խանութ-սրահ: Խանութի տնօրենը, որը նաև հիմնադիրն է Արմինե Աբաջյանն է: Նա ասում է, որ անելիքի էությունն ու նպատակը միակն է. սերմանել լավն ու բարին, երեխայի մեջ ներարկել գեղեցիկն ու նուրբը գնահատելու ունակություն:

Այս բոլորը թանգարանում ներկայացված էին այնպես, որ թե՛ մեծահասակները և թե՛ փոքրերը հետաքրքրություն գտնեին դրանց մեջ: Փոքրիկները դրանց մեջ տեսնում էին իրենց ապագա խաղալիքներին, որոնք դեռ չունեն, իսկ մեծերը դրանք դիտարկում էին որպես ծեսի մի մասնիկ և հավատալիք:

Ամփոփելով կարող ենք ասել, որ դարերի ընթացքում բազմաթիվ փոփոխություններ կրելով՝ տիկնիկները միշտ էլ որոշակի դերակատարություն են ունեցել մարդկանց կյանքում, որպես հավատալիքի, ծեսի, տոնի, անբաժանելի տարր կամ դաստիարակության, կրթության ու ժամանցի միջոց: Ժամանակակից համաշխարհայնացման գործընթացներում դրանք շահութաբեր բիզնեսի տարր լինելուց բացի՝ դարձել են նաև գեղեցկության, առնականության չափանիշներ և աշխարհայացք ձևավորող միջոցներ:

Даллакян Мери, Современные изменения традиционной куклы по примеру выставки музея истории города еревана,-Кукла всегда сопровождала детей и взрослых в повседневной и празднично-ритуальной жизни. В течение столетий некоторые куклы, которые использовались в армянской культуре постепенно превратились в простую игрушку. Сегодня, в повседневной жизни, кукла как элемент национальной культуры имеет важное место в нашем обществе. Целью нашего доклада является изучение куклы на примере выставки "Кукольные истории ", которая открылась в музее истории города Еревана 11 ноября 2014 года. Выставка была призвана с помощью «кукольных истории» представить

[1] Ակլատիզ, 03.04.2015, http://www.qahana.am/ru/scenarios/show/705216272/10:

[2] Հանդլերի խոսքով՝ իր դուստր Բարբարան (որի անունով կոչվել է բարբի տիկնիկը) մանկության տարիներին ընկերների հետ հաճախ էր խաղում թղթե տիկնիկներով:Առաջին բարբիի արժեքը՝ $3.00 էր:

[3] Ամերիկացի Սինդի Զեքսոնը կատարել է 55 պլաստիկ վիրահատություն, բարբիին նմանվելու համար: 2000 թվականին բարբի տիկնիկի տեսքը փոխվել է:

куклу как многообразный культурный феномен который " вошел " во все сферы жизни. На выставке были представлены куклы ручной и авторской работы из музеев и частных коллекций, армянские обрядовые куклы, куклы актёры, а также куклы советского массового производства. «Кукольные истории» начинались с обрядовых кукол и заканчивались историями кукол, которые "работают " в театре. Конечно, не были игнорированы и современные Барби. В заключении можно сказать, что в течение веков куклы много изменились, но всегда имели необычную роль в жизни людей как неотъемлемый элемент веры, ритуала или праздника, способ воспитания, образования или развлечения. В современных процессах глобализации кукла является не только частью прибыльного бизнеса, но и сама представляет стандарты красоты, моды или мужественности.

***Ключевые слова*:** традиционная кукла, современная кукла, музей

Dallakyan Meri, Modern transformations of traditional doll by the example of exhibition in Yerevan history museum,- The doll has always accompanied the children and adults in everyday and festive-ritual life. Over the centuries, some dolls that were used in the Armenian culture gradually turned into a simple toy. Today, in everyday life, the doll as an element of national culture has an important roly in our society. The purpose of our report is to study the doll by the example of the exhibition "Dolls' Stories", which opened in the museum of the history of the city of Yerevan on November 11, 2014. The exhibition was designed with «dolls stories» to present the doll as a diverse cultural phenomenon that "entered" all spheres of life. At the exhibition were presented dolls of manual and author's work from museums and private collections, Armenian ritual dolls, dolls- actors, as well as dolls of Soviet mass production. «Dolls' stories» began with ritual dolls and ended with stories of dolls that "work" in the theatre. Of course, modern Barbie was not ignored either. In conclusion, we can say that over the centuries, dolls have changed a lot, but have always had an unusual role in people's lives as an integral element of faith, ritual or feast, a way of breeding, education or entertainment. In modern processes of globalization, the doll is not only a part of profitable business, but it also represents the standards of beauty, fashion or masculinity.

Key words: traditional doll, modern doll, museum